

**ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵԿԵՂԵՑԻԻ**  
**ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 90 ԱՄԵԱԿԻ ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ**  
**ՀԱՆԴԻՍԱԴՈՐ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ**

Մ.Ա.Հ.Ա.Եկեղեցիներու Միութեան Կեդրոնական Մարմինի հովանաւորութեամբ եւ Հայ Աւետ. Բեթել եկեղեցիի 90 Ամեակի Յոբելենական Յանձնախումբի կազմակերպութեամբ, Կիրակի 2 Մարտ, 2014-ին, կէսօրէ ետք ժամը՝ 4:00-ին, տեղի ունեցաւ Հայ Աւետ. Բեթել Եկեղեցիին հիմնադրութեան 90 Ամեայ հանդիսաւոր պաշտամունքը, ի ներկայութեան՝ Հայ երեք Համայնքապետերու, Հ.Հ. Գլխաւոր Հիւպատոսի, հոգեւոր հովիւներու, բարեսիրական եւ մշակութային Միութիւններու ներկայացուցիչներու, Հալէպի Հայ Աւետարանական Վարժարաններու Տնօրէններուն եւ ուսուցչակազմերուն, Հայ Աւետարանական Եկեղեցիներու ժողովներուն եւ խումբերամ բազմութեան: Պաշտամունքի առաջնորդութիւնը կատարեց Վեր. Սերոբ Մկրտիչեան՝ երգեցողութեամբ եւ փոխադարձաբար կարդալով 5-րդ փոխասաց ընթերցուածը ապա միասնաբար ընթերցուեցաւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու Հաւատոյ Հանգանակը իբրեւ եկեղեցիի հրապարակային վկայութեան արտայայտութիւնը: Պաշտամունքին ընթացքին Պատ. Սիմոն Տէր Սահակեան՝ մատուց փառաբանութեան աղօթք, անդրադառնալով եկեղեցիին բեղմնաւոր եւ հաւատարիմ ծառայութեան ու վկայութեան: Վեր. Եռսէֆ Ճապպուր իր մասնակցութիւնը բերաւ, արաբերէն լեզուով, Աստուածաշունչի ընթերցումը կատարելով: Յայտագրի ընթացքին տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր: Տիկ. Բալիկ Գալէմքերեան Բօբօվա հրամցուց երեք մեներգներ՝ «Տէր Կեցոյ», «Սուրբ Սուրբ» եւ «Տէրունական Աղօթք», դաշնակի ընկերակցութեամբ՝ Տիկ. Շողակաթ Աբարդեան Սելիմեանի: Տիար Ատուր Պոսնոյեան եւ Օր. Սեւան Չիրիշեան ներկայացուցին սահիկներու ճամբով Բեթել եկեղեցիի 90 ամեայ պատմականը ու վերջին քսան տարիներու բարգաւաճումները: Ապա Օրիորդներ՝ Անժելլա Տաղլեան եւ Լուսի Մուտարիկեան ասմունքեցին համադրում մը Վահան Թէքէեանէն՝ «Եկեղեցին Հայկական» եւ Միսաք Մեծարենցէն՝ «Տո՛ւր Ինձի Տէ՛ր» բանաստեղծութիւններէն: Հայ Աւետարանական Բեթել եկեղեցիի Յոբելենական 90-ամեակին առթիւ Վեր. Յարութիւն Սելիմեան մատուց

պատգամ, հիմնուած՝ Մատթ. 13:52, «Կառչած մնալ բարեկարգեալ եկեղեցիին մշտանորոգ սկզբունքներուն, սնուցուելով մեր արմատներէն»: Պաշտամունքի աւարտին՝ Մ.Ա.Հ.Ա.Եկեղեցիներու Միութեան Կեդրոնական Մարմինի Սուրբիոյ բաժինի ատենապետ՝ Վեր. Սերոբ Մկրտիչեան, Հայ Աւետարանական Բեթել եկեղեցիի Միացեալ ժողովին անունով պարգևատրեց Վեր. Յարութին Սելիմեանը արծաթեայ պնակով, առ ի գնահատանք իր 25 տարիներու՝ հովուական ծառայութեան Հայ Աւետ. Համայնքէն ներս եւ 20 ու աւելի տարիներու՝ Բեթել եկեղեցիի հովուական ծառայութեան համար: Այս ուրախ եւ բարեբաստիկ առիթով, Արհիապատիւ Տէր Պետրոս Արք. Միրիաթեան (Առաջնորդ Հայոց Բերիոյ Կաթողիկէ թեմի) եւ Գերաշնորհ Տէր Շահան Ս. Արք. Սարգիսեան (Առաջնորդ՝ Հայոց Բերիոյ Թեմի) փոխանցեցին իրենց սրտին խօսքը, գնահատելով եկեղեցիին անսակարկ ծառայութիւններն ու առաքելութիւնները՝ յատկապէս Վեր. Յարութին Սելիմեանի անխոնջ նուիրուածութիւնն ու հաւատարիմ ծառայութիւնը եկեղեցիին եւ Հայ Աւետարանական համայնքին վերելքին ի խնդիր: Պաշտամունքը վերջ գտաւ Տէրունական աղօթք «Հայր Մեր»ի երգեցողութեամբ եւ Համայնքապետ՝ Վեր. Յարութին Սելիմեանի առաքելական օրհնութեան աղօթքով:





